ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ

ԿՈՐՅՈՒՆ ԹՈՐՈՍՅԱՆ, ՇԱԼԻԿՈ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հարստությունը, առանց որի վերարտադրության և բազմապատկման հասարակական զարգացումն անհնարելի է, գոյություն է ունեցել և մարդկանց ուշադրությունն է գրավել դեռևս նախքան քաղաքատնտեսության՝ որպես գիտություն երևան գալը։ Հին հունական մտածող Թուկիդիտեսը գրել է. «Շնորհիվ մեր պետության վեհության, բոլոր երկրներից մեզ մոտ է բերվում բացարձակապես ամեն ինչ, և մենք կարող ենք միատեսակ հարմար օգտվել ինչպես այն հարստություններից, որոնք արտադրվում են այստեղ, այնպես էլ նրանցից, որոնք արտադրվում են այլ մարդկանց մոտ»[1]։ Արիստոտելն էլ պնդում էր, որ գոյություն ունեն երկու գիտություններ՝ էկոնոմիկա և հարստացման արվեստ։ Դրանցից առաջինը, նրա կարծիքով, ուսումնասիրում է հարստությունը՝ որպես սպառողական արժեքների ամբողջություն, իսկ երկրորդը՝ դրամական ձևով[2]։ Արիստոտելից մինչև Ա. Սմիթ «քաղաքատնտեսությունը զարգանում էր իբրև գիտություն հարստության մասին»[3]։ Դա նկատվում է նաև merկանտիլիստների, ֆիզիոկրատների և բուրժուական այլ տնտեսագետների աշխատություններում։ Բնութագրելով քաղաքատնտեսության մերկանտիլիստական սիստեմի կառուցվածքը, Ֆ. Էնգելսը գրել է. «Այդ քաղաքատնտեսությունը կամ հարստացման գիտությունը, ծագելով վաճառականների փոխադարձ նախանձից ու ագահությունից, իր ճակատին կրում է ամենագարշելի շահասիրության կնիքը։ Մարդիկ դեռևս ապրում էին պարզունակ պատկերացումներով, որ հարստությունն իբր թե ոսկու և արծաթի մեջ է»[4]։ Սրանից երևում է, որ մերկանտիլիստները չէին կարող բացահայտել հարստության իսկական հասարակական էությունը։ Եվ միայն «այն բանից հետո,— գրել է Կ. Մարքսը,— երբ ռեալ աշխատանքի հատուկ ձևերը՝ հողագործությունը, մանուֆակտուրան, նավագնացությունը, առևտուրը և այլն հերթով հայտարարվեցին հարստության իսկական աղբյուրներ, Ադամ Սմիթն աշխատանքն ընհանրապես հռչակեց որպես նյութական հարստության կամ սպառողական արժեքների միակ աղբյուր»[5]։ Սմիթյան այդ դրույթը զարգացրեց Դ. Ռիկարդոն, որը տարբերում էր արժեքն իբրև հասարակայնորեն անհրաժեշտ աշխատանքի քանակություն և հարստությունը, որպես հասարակության տնօրինության տակ գտնվող իրերի գումար։

Այժմ բուրժուական տնտեսագետների գերակշռող մասն ազգային հարստությունը հաշվելիս նրա մեջ է մտցնում այն ամենը, ինչը առք ու վաճառքի առարկա է, նույնիսկ այն նյութական բարիքները և օբյեկտները, որոնցում մարդկային աշխատանք չի ներդրված։ Բավական է, որ այդ օբյեկտները նրպաստեին հավելյալ արժեքի արտադրությանը։ Դրանց թվին են պատկանում ֆիկտիվ կապիտալը, հողը, չլուրացված բնական ռեսուրսները և այլն, որոնք

---

[1] *Մեջբերումը տե՛ս* Н. Н. Бондарь, О товарном производстве в условиях рабовладельческой формации, Киев, 1955, с. 28.

[2] «Экономическая энциклопедия», т. 1, М., 1972, с. 85.

[3] В. Н. Черковец, О методических принципах политической экономии как научной системы, М., 1965, с. 31.

[4] К. Маркс и Ф. Энгельс, Соч., 2-е изд., т. 1, с. 544.

[5] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 13, с. 45.

դրամական արտահայտությամբ հանգեցնում են ազգային հարստության ավելացմանը։

Կապիտալիստական հասարակության մեջ ազգային հարստությունը հաշվելու տարբեր մեթոդոլոգիական մոտեցումները պայմանավորված են ոչ միայն հարստություն կատեգորիայի մշակման թուլությամբ, այլև սոցիալ-տնտեսական էությամբ և նրա զարգացման պատմությամբ։ Կապիտալիզմի պրոգրեսիվ զարգացման պրոցեսում հարստության հետազոտություններում գերակշռում էր դրամական տեսանկյունը, որպեսզի կազմակերպվեր հարկադրումը, իսկ այժմ դրան ավելացել են բուրժուական հասարակությունը պայթյունից ու կործանումից փրկելու հնարավորությունների որոնումները։

Հարստությունը, արտադրության բոլոր եղանակներում լինելով տնտեսական կատեգորիա, սեփականության օբյեկտ էր։ Նրա կարևոր մասը մասնավոր տնտեսության ժամանակ արտադրության միջոցների տեսքով պատկանում է տիրապետող դասակարգին։ Հետևաբար, այն հասարակության մեջ, որտեղ գոյություն ունի արտադրության միջոցների սեփականության մասնավոր ձևը, «հարստություն» կատեգորիայի ամեն մի հետազոտություն արտացոլում է իրենց՝ շահագործողների, շահերը։

Անբավարար տեսական մշակվածության հետևանքով սովետական տնտեսագետների շրջանում ևս միասնական տեսակետ չկա հարստության մասին, որպես սահմանված հասկացության։ Մեր կարծիքով դրանով է պայմանավորված սոցիալիստական հասարակության հարստության սահմանումների համար միանգամայն տարբեր կատեգորիաների կիրառումը և դրանց զանազան մեկնաբանությունները։ Մինչև այժմ սոցիալիստական հասարակության հարստության մասին գրվել են աննշան թվով հատուկ աշխատություններ, որոնցում նկատվում են այդ կատեգորիայի մասին տարբեր տեսակետներ։ Եթե ընդհանրացնենք տնտեսագիտական գրականության մեջ քննարկվող կատեգորիայի մասին եղած կարծիքները[6], ապա կարելի է ասել հետևյալը. ա) հարստությունը որոշվում է իբրև կուտակված սպառողական արժեքների զանգված, անկախ նրա արտադրության հասարակական բնույթից և իրացման ձևերից, բ) նրա զանազան մեկնաբանություններ են նկատվում ոչ միայն տարբեր տընտեսագետների, այլև նույն տնտեսագետի մոտ՝ հենց նույն աշխատությունում, գ) հարստությունը նույնացվում է սեփականության հետ, դ) բացակայում է հարստության կառուցվածքային վերլուծությունը, մասնավորապես ըստ սեփականության ձևերի, սոցիալ-տնտեսական նշանակության և այլն։

Մարքսիզմ-լենինիզմի դասականները մատնանշել են, որ եթե դեն նետենք բուրժուական սահմանափակվածության ձևը, հարստությունը, այլ բան չէ, եթե ոչ պահանջմունքների համակողմանիություն, բնության ուժերի նկատմամբ մարդու տիրապետության լիակատար զարգացում, մարդու ստեղծագործական ձիրքերի բացարձակ բացահայտում[7]։ Հաշվի առնելով դա, կարելի է բաժանել այն տնտեսագետների կարծիքը, որոնք հարստություն ասելով հասկանում են նյութական և հոգևոր արժեքների ամբողջ առկա հանրագումար, արժեքներ, որոնք կուտակվել, ստեղծվել կամ հարմարեցվել են մարդկային պահանջմունքների բավարարմանը[8]։ Սոցիալիզմի օրոք առանց նյութական և հոգևոր հարստությունների միասնությունը և նրանց համամասնական սպառումն ընդունելու անհնարին է բուրժուական հայացքների մնացուկների լիակատար հաղթահարումը։

---

[6] А. И. Ноткин, Очерки теории социалистического воспроизводства, М., 1948, с. 54; Е. И. Фреймундт, Очерки по статистике национального богатства СССР, М., 1955, с. 4—5; В. Н. Кириченко, Национальное богатство СССР, М., 1964, с. 25; Я. А. Кронрод, Законы политической экономии социализма, М., 1966, с. 508—509; его же, Общественный продукт и его структура при социализме, М., 1968, с. 116.; М. Н. Еганян, Расширенное воспроизводство национального богатства СССР, Ереван, 1975, с. 43—47.

[7] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, 1, с. 476.

[8] Е. С. Лазуткин, Наше богатство—как его умножить?, М., 1971, с. 9.

Հարստությունն իբրև մարդկային հասարակության գործունեության արդյունք բաժանվում է երկու մասի՝ նյութական և հոգևոր։ Այդ հարստությունները մի կողմից սպառվում են, իսկ մյուս կողմից՝ ստեղծվում։ Կ. Մարքսի պատկերավոր արտահայտությամբ, հարստությունները հիշեցնում են փոստակայան, որը «շարունակ լցված է, բայց միշտ նոր ճանապարհորդներով»[9]։ Լինելով այդպիսին, այն բնական հարստությունների հետ միասին կազմում է սեփականության տիրապետող ձևի հիմքը։

Անկախ հասարակական կարգից, հասարակության օգտակար գործունեության նախադրյալը և ողջ բազմամյա արդյունքը, որը վերականգնման անընդհատ շարժման մեջ է, ի տարբերություն բնական հարստությունների կարելի է սահմանել իբրև տնտեսական հարստություն։ Հասարակական արդյունքը, որն այդ հարստության կարևորագույն մասն է, տարվա ընթացքում արտադրության ստեղծած ամբողջ նյութական արդյունքն է։ Այն սպառման նկատմամբ արտադրության գերակշռությանը համընթաց ավելացնում է նյութական հարստությունը։ Տնտեսական հարստությունը գա մարդկանց գործունեությամբ միջնորդավորված ոչ միայն նյութական, այլև հոգևոր բարիքների հանրագումարն է, բարիքներ, որոնց մի մասն անընհատ կուտակվում է հասարակության մեջ և նպաստում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հետագա զարգացմանը։ Հենց այդ նկատի ուներ Կ. Մարքսը, երբ ընդգծում էր, որ «առկա բնակչության արվեստի աստիճանը միշտ կազմում է ամբողջ արտադրության նախադրյալը, հետևաբար, գլխավորը հարստության կուտակումն է»[10]։ Քանի որ կուտակումն օբյեկտիվ պրոցես է և կախված չէ հասարակության կամքից ու ցանկությունից, ստեղծված հարստության մի մասը կուտակվում է ինչպես արտադրության միջոցների, հիմնական անարտադրական ֆոնդերի և երկարատև անձնական օգտագործման առարկաների, այնպես էլ արվեստի, արտադրական փորձի, մասնագիտական վարպետության, էթիկայի, գեղագիտության տեսքով և այլն։ Հարստության հետազոտության մեթոդոլոգիան, որը մեզ տվել են մարքսիզմ-լենինիզմի դասականները, ցույց է տալիս, որ քաղաքատնտեսության համար չկա հարստություն ընդհանրապես, այլ կա արտադրության որոշակի եղանակի հարստություն։ Դա բազմիցս ընդգծել է Կ. Մարքսը. «Քաղաքատնտեսությունը,— գրել է նա,— գործ ունի հարստության յուրահատուկ հասարակական ձևերի, կամ ավելի ճիշտ հարստության արտադրության հետ»[11]։ Հաշվի առնելով դա, հարկ է նկատել, որ հարստության արտադրության և յուրացման պրոցեսը տիրապետող արտադրական հարաբերությունների իրացման պրոցես է։ Նշանակում է, տնտեսական հարստությունը պետք է ուսումնասիրել, ելնելով այն արտադրական հարաբերությունների բնույթից, որոնց պայմաններում գործում են հասարակության արտադրողական ուժերը։

Հարստությունն իր հիմքում միշտ էլ նյութական բովանդակություն է ունեցել։ Այն տնտեսական հիմք է ստացել միայն այն ժամանակ, երբ ձևավորվել է մարդկային հասարակությունը, այսինքն երբ սաղմնավորվել են արտադրական հարաբերությունները։ Այսպես, նախնադարյան հասարակության ձևավորման արշալույսին (վայրենության շրջան) մարդիկ յուրացնում էին բնության պատրաստի արդյունքները՝ բնական հարստությունները։ Այդ առարկաները շնչած և սպառվում էին նախամարդու կողմից և պահպանում էին նրա կենսագործունեությունը, սակայն տնտեսական իմաստով հարստություն չէին համարվում, քանի որ դրանցում մարդկային աշխատանք չէր ներդրված։

Վաղ քարե դարում մարդն օգտագործում էր քարե կոպիտ գործիքներ։ Վերջիններս դուրս էին մղում այնպիսի գործիքները, որոնք հենց մարդու մարմնի որոշակի վերջավորություններն էին՝ եղունգները, ատամները և այլն։

---

[9] Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. III, с. 292.
[10] Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. III, с. 306.
[11] Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. II, с. 366.

բնության առարկաները, որոնք ստացել էին գերհասարակ աշխատանքային «շնչավորում», պայմանավորեցին տնտեսական հարստության ձևավորումը, ի տարբերություն բնականի՝ «մաքուր» նյութականի։ Անասնապահության առաջացումը, անցումը հողագործության նշանավորեցին արտադրողական ուժերի ձևավորման և զարգացման կարևոր փուլը։ Մարդկանց միջև առաջացան նյութական բարիքների ստեղծման հարաբերություններ։ Դրա հիման վրա բնության ավելի շատ հարստություններ էին վերափոխվում նյութական տնտեսական հարստության։ Դրանով իսկ աշխատանքը սկսեց «մատերիան» վերածել «տնտեսական մատերիայի՝ բնության առարկաները մարդու ազդեցության տակ նպատակաուղղված կերպարանափոխվում էին։ Այստեղից էլ սկսվեց մարդկային հասարակության գոյության դարաշրջանը։ Այսպիսով, բնական հարստությունները պետք է տարբերել տնտեսականից, առավել ևս ազգայինից, հասարակականից[12]։

Արտադրողական ուժերի հետագա զարգացումը հանգեցրեց մարդկանց միջև տնտեսական կապերի ընդարձակմանը։ Ընտանիքի, տոհմի շրջանակներում կոոպերացիան արդեն չէր համապատասխանում արտադրողական ուժերի մակարդակի պահանջներին։ Ձևավորվում է մարդկանց ընդհանրության նոր ձև՝ ցեղը։ Այն տիրում էր որոշակի տարածքի, ներառնում էր մի քանի տոհմեր, տարածություններ ուներ որսորդության և ձկնորսության համար։ Այդ հասարակական կարգի հարստությունները ստեղծող և յուրացնող սուբյեկտները տոհմերի և ցեղերի անդամներն էին։ Հետևաբար, նախնադարյան հասարակության տնտեսական հարստությունը կազմում էր համայնական սեփականության հիմքը։ Նախնադարյան հասարակության արտադրողական ուժերի զարգացման հիման վրա տեղի ունեցավ մարդկանց սոցիալ-տնտեսական շերտավորում և արտադրական հարաբերությունների փոխարինումն անհրաժեշտ դարձավ։ «Աշխատանքի առաջին խոշոր հասարակական բաժանումը, աշխատանքի արտադրողականության, հետևաբար և հարստության ավելացման ու արտադրական գործունեության ասպարեզի ընդլայնման հետ միասին, այն ժամանակվա պատմական պայմաններում իր ետևից անհրաժեշտաբար ստրկություն բերեց»[13]։ Առաջին շահագործողական հասարակության առաջացումը ենթադրում էր երկու պայման. ա) արտադրողական ուժերի զարգացման այնպիսի մակարդակ, որն ապահովեր հավելյալ արդյունքի ստացումը, բ) գույքային անհավասարության առաջացում, որը փոխանակության զարգացմամբ և մասնավոր սեփականության առաջացմամբ ուժեղանում էր։ Նշանակում է, հարստությունը և սեփականությունը տնտեսական առումով ծագել են դեռևս արտադրության նախնադարյան համայնական եղանակի պայմաններում և իրավական ուժ են ձեռք բերել ստրկատիրական հասարակության երևան գալով։

Աշխատանքի երկրորդ խոշոր հասարակական բաժանումը (արհեստի բաժանումը անասնապահությունից և հողագործությունից) հանգեցրեց ապրանքի և փողի երևան գալուն, որոնք իրենց տերերին և՛ հարստություն, և՛ իշխանություն էին տալիս։ Հասարակության մեջ հարստությունը և քաղաքական կրշիռը մարդկանց կյանքում դարձան անբաժան։ Հարստությունն ուժով զավթելու նպատակով ցեղերի միջև պատերազմներ էին առաջանում։ Տոհմային կարգի մարմինները սկսեցին աստիճանաբար կորցնել իրենց դեմոկրատական բնույթը և վերածվել հարստության նկատմամբ սեփականությունը պաշտպանելու մարմինների։ Հարստության կարևորագույն մասի՝ արտադրության միջոցների նկատմամբ սեփականության ծագումից հետո (իսկ դա տեղի ունեցավ նախնադարյան համայնական կարգի քայքայման փուլում) հնարավոր դարձավ ոչ շատ մարդկանց հարստացումը։ Հարստությունն անխզելի կապի մեջ գտնվելով սեփականության հետ, վերածվել էր տնտեսական հզոր ուժի և

---

12 «Ազգային» կամ «հասարակական» հարստություն ասելով մենք նկատի ունենք պատմական զարգացման որոշակի փուլի հարստությունը։

13 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, Երևան, 1978, էջ 421։

անհատների որոշակի նպատակի։ Ֆ. Էնգելսը նշել է, որ «ստոր ընչաքաղցությունն է եղել քաղաքակրթության առաջմղիչ ուժը նրա առաջին օրվանից մինչև այսօր, նրա միակ ու որոշիչ նպատակը եղել է հարստությունը, դարձյալ հարստությունը և կրկին հարստությունը, ըստ որում ոչ թե հասարակության հարստությունը, այլ այս առանձին գծուծ անհատի հարստությունը»[14]։

Ստրկատիրական հասարակությունում հարստության հիմնական տեսակը ստրուկներն էին։ Այդ հասարակության մեջ հարստության նման ձևի առկայությունը մարդու կողմից մարդու շահագործմանը տալիս էր ծայրահեղ դաժան և բարբարոսական բնույթ։ Ստրուկների նկատմամբ շահագործողների վերաբերմունքը ոչնչով չէր տարբերվում կենդանիների նկատմամբ վերաբերմունքից։ «Հարստության» այդ մասը սպառողական այնպիսի արժեք ուներ, որ նրա տերերին թույլ էր տալիս բավարարել անհրաժեշտ բոլոր պահանջմունքները։ Իսկ ինքը՝ ստրուկը, լինելով մարդ, սեփականության ոչ մի ձևի (ո՛չ մասնավոր, ո՛չ անձնական) իրավունք չուներ։ Նա ինքը դարձել էր ստրկատիրոջ սեփականության օբյեկտը։

Հարստությունների արտադրության հետագա ավելացումը հանգեցրեց առևտրի զարգացմանը։ Հարստություններն ավելի ու ավելի էին տեղաշարժվում մի տարածքից մյուսը, փոխանակության և պատերազմի միջոցով դուրս էին գալիս մի պետության շրջանակներից։ Դրանով իսկ առևտուրն ու կողոպուտը ճնշում էին գյուղական համայնքի շահերը, նրա անդամների միջև առաջ բերելով գույքային և սոցիալական արագ շերտավորում։ «Տոհմական հասարակարգը,— գրել է Ֆ. Էնգելսը,— բացարձակապես անհամատեղելի է դրամական տնտեսության հետ. Ատտիկայի մանր գյուղացիների քայքայումը զուգադիպեց նրանց պաշտպանող հին տոհմային կապերի թուլացմանը։ ...Իսկ նախկին տոհմային հասարակարգը ո՛չ փող գիտեր, ո՛չ փոխատվություն, ո՛չ դրամական պարտք»[15]։

Առևտուրն ու փողը հնարավոր դարձրին մանր հողատերերի կողմից իրենց երեխաների հարկադիր վաճառքը վաշխառուների պարտքերը վճարելու համար։ Ստրուկների ուժի անընդհատ հոսքը և նրանց անխնա շահագործումը հանգեցնում էր ազատ մանր արտադրողների դուրս մղմանը, որը ճակատագրական նշանակություն ունեցավ նրանց հետագա զարգացման վրա։ Ֆ. Էնգելսը նշել է, որ «ոչ թե դեմոկրատիան կործանեց Աթենքը, ինչպես այդ պնդում են եվրոպական անլուրջ պեդանտները, այլ ստրկությունը, որը ազատ քաղաքացու աշխատանքը անարգ բան էր դարձրել»[16]։

Ստրկատիրական հասարակարգի արտադրողական ուժերի հետագա զարգացումը ավելի խորացրեց աշխատանքի բաժանումը։ Դրա հետևանքով աճեց աշխատանքի արտադրողականությունը և արտադրված արդյունքի ավելի մեծ մասն էր փոխանակության համար հանվում շուկա։ Ի հայտ եկավ առևտրական կապիտալը, որը դեպի իրեն էր ձգում հարստությունները և դրանք դնում իր տնօրինության տակ։ Ապրանքն իբրև տնտեսական ուժ իր տիրոջ համար դարձավ արդեն ոչ թե պատահական երևույթ, այլ ստրկատիրական հասարակարգի անբաժանելի մասը։ Եվ այսպես, տնտեսական հարստությունը ծագել է ավելի վաղ, քան նրա դրսևորման ապրանքային ձևը։ Մասնավոր սեփականատիրական տնտեսության հետագա զարգացումը ավելի էր մեծացնում հարստության մեջ ապրանքային զանգվածի բաժինը, որը հանգեցրեց ապրանքային արտադրության վերածմանը հասարակական արտադրության տիրապետող ձևի։

Ստրկատիրական կարգի տնտեսական հարստությունը, իբրև մարդու կողմից մարդու դաժան շահագործման արդյունք, տիրապետող դասակարգի համար պարազիտային սպառման աղբյուր էր։ Այդ հասարակության մեջ, որտեղ արտադրության միջոցների մասնավոր սեփականության հետ մեկտեղ տիրա-

14 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, էջ 439—440։

15 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, էջ 363։

16 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, էջ 373։

պետում էր անմիջականորեն մարդու վրա մասնավոր սեփականությունը, շահագործվող մարդիկ դառնում էին տնտեսական հարստության մարմնական տարրը, իսկ ինքը՝ հարստությունը, անողոք շահագործողների սեփականությունը։

Ստրկատիրական հասարակության հիմքում ընկած էր մարդկանց աշխատանքը, որպես բնության պարգևած ուժ։ Այդ մարդկանց հասարակությունը չէր պահում և բացարձակապես հոգ չէր տանում ճակատագրի ու կյանքի մասին ընդհանրապես։ Այդ հասարակության զարգացման որոշակի փուլում եկավ մի պահ, երբ արտադրական հարաբերությունները վերածվեցին արտադրողական ուժերի զարգացման արգելակի։ Հենց դրանով էին պայմանավորված հիմնական դասակարգային հակասության խորացումը ստրուկների և ստրկատերերի միջև, պետության ռազմական հզորության թուլացումը և արտադրության ստրկատիրական եղանակի կործանումը։

Ֆեոդալիզմը փոխարինելով ստրկատիրական կարգին, հարստության վրա մասնավոր սեփականության բուն ձևի մեջ փոփոխություններ մտցրեց։ Ֆեոդալական սեփականությունը ստրկատիրականից տարբերվում էր նրանով, որ ֆեոդալները լիակատար իրավունքներ չունեին աշխատող-արտադրողի նկատմամբ։ Սակայն նրանք կարող էին բռնությամբ գյուղացիներին ստիպել աշխատել իրենց համար։ Կարևոր է այն պատմական փաստը, որ ֆեոդալական սեփականության կողքին սաղմնավորվում էր մենատնտեսական և անձնական սեփականությունը՝ հարստության որոշակի մասի վրա։ Ֆ. Էնգելսը, բնութագրելով ֆեոդալիզմի օրոք արհեստավորական արտադրությունը, ընդգծել է, որ «աշխատանքի միջոցները՝ հողը, հողագործական գործիքները, արհեստանոցները, արհեստավորական գործիքներն առանձին անձանց աշխատանքի միջոց էին, նախատեսված միայն միանձնյա օգտագործման համար»[17]։

Ի տարբերություն ստրուկի, ճորտ գյուղացին ուներ իր սեփական տնտեսությունը, որը հիմնված էր անձնական աշխատանքի վրա։ Հարստության յուրացման նպատակով ծագում են ռենտային հարաբերություններ, որի հետևանքով ճորտ գյուղացու աշխատաժամանակը բաժանվում էր անհրաժեշտի և հավելյալի։ Արտադրության ֆեոդալական եղանակի հիմնական տնտեսական օրենքը ֆեոդալների պարազիտային սպառման համար հավելյալ արդյունքի արտադրությունն էր՝ հողային ռենտայի ձևով արտատնտեսական հարկադրանքի ենթարկվող գյուղացիներին շահագործելու միջոցով։ Երբ ռենտային հարաբերությունները զարգացան և սկսեցին իրացվել փողի միջոցով, հարստության որոշակի մասի վրա ճորտ գյուղացիների իրավունքն ավելի վառ դրսևորվեց։ Դա երևում է այն բանից, որ հողային ռենտայից բացի գյուղացիները ֆեոդալին վճարում էին ճանապարհներով անցնելու, աղացից, շրամբարից օգտվելու համար և այլն, իսկ պետությանը՝ հարկ և տարբեր տուրքեր։ «Իր ժամանակի մեծ մասը,— գրել է Ֆ. Էնգելսը,— նա (գյուղացին—Կ. Թ., Շ. Հ.) պետք է աշխատի իր տիրոջ կալվածքում. իսկ մի քանի ազատ ժամերում իր համար կատարած աշխատանքի արդյունքից նա պարտավոր էր վճարել տասանորդ, հողավարձ, բահրա, ռազմական տուրքեր, տեղական և պետական հարկեր»[18]։ Նշանակում է, յուրաքանչյուր ճորտ գյուղացի, նախքան որոշակի գումար վճարելը, պետք է այն ունենար։ Իսկ որպեսզի որոշակի ժամանակ անց վերսկսեր այդ գործարքը, նա պետք է ապրեր և աշխատեր։ Այդ ամենի համար նրան անհրաժեշտ էր ունենալ իր իսկ ստեղծած հարստության որոշակի մասը յուրացնելու իրավունք։ Վ. Ի. Լենինը գրել է. «Այդպիսի տնտեսության (ֆեոդալական—Կ. Թ., Շ. Հ.) համար անհրաժեշտ է, որպեսզի անմիջական արտադրողն ընդհանրապես արտադրական միջոցներ և մասնավորապես հող ստացած լինի»[19]։ Արտադրության զարգացման և հարստության յուրացման

---

17 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 20, с. 279.

18 Ֆ. Էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմը, Երևան, 1934, էջ 42—43։

19 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 221։

հետ ձևավորվում է մարդկանց ընդհանրության համապատասխան ձև։ Անկախ անարդարացի բաշխումից և յուրացումից՝ ֆեոդալիզմի ժամանակ հարստություններն արտադրում են շահագործվող ժողովրդական զանգվածները։ Այսպիսով, ֆեոդալիզմը մի կողմից սկիզբ դրեց հարստության «ժողովրդականացմանը»՝ նրա սեփականության մասնավոր ձևի պայմաններում, իսկ մյուս կողմից՝ ամրապնդեց շահագործողների տիրապետությունը։ Դա ստրկատիրական հասարակության նկատմամբ ֆեոդալիզմի հիմնական առավելություններից մեկն է։

Ֆեոդալիզմի պայմաններում աճած արտադրողական ուժերը առաջ էին բերում նոր հասարակարգին՝ կապիտալիզմին, անցնելու անհրաժեշտությունը։ Կապիտալիզմը սաղմնավորվելով ֆեոդալիզմի ընդերքում և մերժելով արտադրության այդ եղանակը, չի վերացնում հարստության վրա սեփականության մասնավոր ձևը, այլ միայն ձևափոխում է այն։ Մասնավոր սեփականությամբ, հետևաբար և մարդու կողմից մարդու շահագործմամբ, սկսվեց անմիջական արտադրողների մասսայական կողոպուտի պատմությունը։ Այն հասարակությանը մղեց «բոլորը բոլորի դեմ պատերազմելու» վիճակի։ Ֆ. Էնգելսի արտահայտությամբ, դա «առանձին գոյության համար դարվինյան պայքարն է, տասնապատիկ կատաղությամբ բնությունից տեղափոխված հասարակություն։ Կենդանիների բնական վիճակը հանդես է գալիս որպես մարդկային զարգացման պսակ»[20]։ Այն բանից հետո, երբ կապիտալիզմը հաղթեց և դարձավ արտադրության տիրապետող եղանակը, քանակական առումով հաղթվողներն ավելի շատ էին, քան հաղթողները։

Հետագայում հասարակական կապիտալը. կուտակման ուղղակի բռնի ձևից անցավ վարձու աշխատանքի հաշվին կուտակմանը։ Դեռ ֆեոդալական կարգի ընդերքում կապիտալի կուտակման պրոցեսը խթանում էր մարդկանց այնպիսի ընդհանրության առաջացմանը, որն իր միասնությամբ կհամապատասխաներ համընդհանուր ապրանքային արտադրության շահերին։ Պատմական ասպարեզի վրա երևան է գալիս ազգը։ Վերջինս, լինելով մարդկության պատմական զարգացման հետևանքը, դարձավ կապիտալիզմի արդյունքը։ Կ. Մարքսը գրել է. «Միայն այն ժամանակ, երբ կապիտալիստական արտադրությունը դարձավ տիրապետող... երբ կապիտալիզմը գործնականում ամբողջ հավելյալ աշխատանքը և ամբողջ հավելյալ արդյունքը անմիջականորեն յուրացնում է... միայն այդ պահից է շահույթը դառնում կապիտալի գլխավոր արդյունքը, այն հարստության կուտակման, որը խնայվում է եկամուտից և օգտագործվում է շահույթ ստանալու նպատակով։ Այդ դրա հետ միասին ենթադրում է, որ տեղի է ունեցել ազգային արտադրության նշանակալի աճ»[21]։

Կապիտալիզմն արտադրության այնպիսի եղանակ է, որը մի կողմից համախմբման միջոցով մարդկանց ձևավորում է ազգի մեջ, իսկ մյուս կողմից ասիմիլյացիայի քաղաքականություն է վարում այն ժողովուրդների և մանր ազգությունների նկատմամբ, որոնք չեն կարող դիմադրավել կապիտալի մասնավոր շահին՝ հարստությանը, մոնոպոլիստների ուժին։

Ազգերը կապիտալիզմի օրոք բուրժուական են։ Բոլոր կապիտալիստական երկրներում նրանք հակադիր շահերով պառակտված են. շահագործող փոքրամասնության և շահագործվող մեծամասնության։ Այստեղ անտեսական ճարտարությունը ներառնում է այդ դասակարգերի միջև եղած հակասությունը, որը պայմանավորված է այդ հարստության կարևորագույն մասերի նկատմամբ սեփականություն բուրժուական ձևով։

Կապիտալիստական մասնավոր սեփականությունը հարստության արտադրությանը տալիս է համընդհանուր ապրանքային բնույթ, այսինքն՝ այն ամենը, ինչ արտադրվում է, աշխատանքի հետ միասին դառնում է ապրանք։ Այդ հասարակության մեջ հարստությունը հանդես է գալիս կուտակված ապ-

---

[20] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 20, с. 284—285.

[21] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. III, с. 436—437.

ռանքային զանգվածների տեսքով։ Այդ կապակցությամբ Կ. Մարքսը գրել է, որ այն «հասարակությունների հարստությունը, որտեղ տիրապետում է արտադրության կապիտալիստական եղանակը, հանդես է գալիս իբրև ապրանքների հսկայական կուտակում, իսկ առանձին ապրանքը՝ որպես այդ հարստության տարրական ձև»[22]։

Այդպիսի հարստության մեջ մի կողմից ձուլվում են անմիջական արտադրողների տառապանքները, զրկանքներն ու անխնա շահագործումը, իսկ մյուս կողմից՝ բուրժուազիայի պարապությունն ու պարազիտիզմը։ Կապիտալիստական հասարակության մեջ տնտեսական հարստությունը գործում է՝ միջնորդավորվելով մարդկանց ընդհանրության ազգային ձևի միջոցով։ Հարստությունը կապիտալիզմի օրոք դառնում է բուրժուական-ազգային, որն ըստ էության կուտակված ապրանքների մեծ զանգված է։ Տնտեսական հարստությունը լինելով սոցիալ-տնտեսական որոշակի հարաբերությունների արդյունքն ու կրողը, հասարակական առաջընթացի հետ միասին նույնպես դիալեկտիկական զարգացում է ապրել՝ պարզից դեպի բարդը։ Սակայն դա բացատրվում է ոչ թե աշխատանքի արդյունքների որակի փոփոխությամբ, այսինքն՝ օգտակար արժեքների զարգացմամբ կոպիտ քարե հատիչից մինչև տիեզերանավերը, այլ՝ դրանց յուրացման ձևով։

Մարդկային հասարակության պատմական զարգացումը վաղ թե ուշ հանգեցնում է կապիտալիզմի լիակատար և վերջնական ոչնչացմանը, կոմունիզմի համաշխարհային հաղթանակին։ Այդ հիման վրա բուրժուական ազգային հարստությունը համապարփակ կփոխարինվի հասարակական հարստությամբ՝ կոմունիստական հասարակարգին համապատասխան։ Դա կլինի հասարակական զարգացման այնպիսի փուլ, երբ, ինչպես նշել է Կ. Մարքսը, հարստության չափանիշը կլինի արդեն բնավ ոչ թե աշխատաժամանակը, այլ ազատ ժամանակը, երբ իսկական հարստություն կդառնա բոլոր անհատների զարգացած արտադրողական ուժը[23]։ Հաղթանակած սոցիալիստական հեղափոխությունն ամեն երկրում պսակում է այդպիսի իսկական հարստության ձևավորման սկիզբը։

Հարստության յուրաքանչյուր տարրը մարմնավորում է համապատասխան սոցիալ-տնտեսական հարաբերություններ, հանդիսանում է որոշակի տնտեսական դարաշրջանի մարդկանց գործունեության արդյունք և նախադրյալ։ Այդ իսկ պատճառով մարքս-լենինյան քաղաքատնտեսության առարկան ներառնում է ոչ թե ստեղծված հարստությունների քանակն ու որակը, այլ դրանց արտադրության ու յուրացման հասարակական տնտեսական պայմանները, որոնք մարդկանց գործունեությունը ենթարկում են համապատասխան սոցիալական էության։ Այդ տեսակետից յուրաքանչյուր տվյալ պահի հասարակությունը ստեղծում է հարստություն, որը, հետևաբար, յուրացվում է առավել ազատ հասարակական պայմաններում։ Արտադրական բարիքների քանակով նախնադարյան համայնական հասարակությունն աղքատ էր ստրկատիրականից. դա հանրահայտ է։ Բայց այդ հասարակություններում տիրապետող տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության ժամանակ պարզվում է, որ առաջինը հարուստ է երկրորդից։ Դա արդյունք է նախնադարյան հասարակությունում շահագործման բացակայության։ «Արտադրության մեջ ամեն մի քայլ դեպի առաջ,— նշել է Կ. Մարքսը,— միաժամանակ նշանակում է մի քայլ ետ ճնշվող դասակարգի, այսինքն հսկայական մեծամասնության դրության մեջ»[24]։ Այդ դրությունը համապատասխանում է բոլոր մասնավոր սեփականատիրական տնտեսություններին։

ՍՍՀՄ-ում հաղթանակած սոցիալիզմը բոլոր քաղաքացիներին ապահովեց անգնահատելի հարստությամբ՝ ազատությամբ, հավասարեցրեց հանրապե-

---

22 Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, с. 43.
23 Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. 2, с. 217.
24 Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 21, с. 177.

տությունների և շրջանների տնտեսական զարգացումը, մերձեցրեց տարբեր ազգերին ու ժողովուրդներին։ Այդ հիման վրա ձևավորվեց միանգամայն նոր, մարդկության պատմության մեջ չտեսնված մարդկանց ընդհանրությունը՝ սովետական ժողովուրդը, որը և հանդիսանում է իր երկրի բոլոր հարստությունների տերը։ Դա գտել է իր օրենսդրական ձևակերպումը ՍՍՀՄ սահմանադրության մեջ։

ГЕНЕЗИС БОГАТСТВА КАК ЭКОНОМИЧЕСКОЙ КАТЕГОРИИ

КОРЮН ТОРОСЯН, ШАЛИКО ОВСЕПЯН

Резюме

Богатство, без которого немыслимо существование и развитие человеческого общества, всегда привлекало внимание исследователей, вкладывавших в это понятие различное содержание. Из-за недостаточной теоретической разработки и сейчас среди экономистов отсутствует единое мнение о богатстве как объекте собственности.

Ретроспективный анализ категории богатства показывает, что домарксистская экономическая мысль понимала богатство как сумму вещей, не видя за ними отношений людей по производству и присвоению этих богатств.

Исследование генезиса и развития богатства, его специфические формы проявления стали необходимой функцией изменения отношений собственности на средства производства, следовательно, и характера системы производственных отношений.